ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ.՝ +374 60517830, 028544296 , էլ-փոստ՝ syunik@mta.gov.am

« 21 » հունվարի 2026թ. № 04/14/00375-2026

«Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերության տնօրեն

Արարատ Կարապետյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պետության կարիքների համար ճանապարհների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման 24.01.2022թ. N ՀՀ ՍՄ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01.1 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

ՀՀ Սյունիքի մարզպետարանի (ներկայումս՝ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ, այսուհետ՝ Պատվիրատու) և «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կատարող) միջև 24.01.2022թ. կնքվել է պետության կարիքների համար ճանապարհների պահպանման աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀ ՍՄ-ՀԲՄԱՇՁԲ-2022/01.1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս համարվող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.3 «ա» ենթակետի համաձայն՝ Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմնավել է հետևյալը.

«ՀՀ Սյունիքի մարզի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները Կատարողն իրականացնում է ապահովելով ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները, ինչպես նաև սպասարկման աշխատանքների կատարման ոլորտին առնչվող այլ իրավական ակտերի, շինարարական նորմերի, ստանդարտների պահանջները:

Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Կատարողը պարտավոր է ապահովել ավտոմոբիլային ճանապարհների, ճանապարհային կահավորանքի պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ տրանսպորտի շուրջօրյա անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

(...)

Ասֆալտբետոնե պատվածքով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման ընթացքում Կատարողը պարտավոր է նաև՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը:
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անկանոնությունը կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների տնանումն ու

բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ

- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին: Եղանակային պայմանների կտրուկ փոփոխության դեպքում պարբերաբար տեղեկացնել ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:

Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով վերը նշված փաստարկները, Պայմանագրի և դրա անբաժանելի մաս համարվող N 1 հավելվածի համապատասխան կարգավորումները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ **Կատարողը խախտել է Պայմանագրով և դրա անբաժանելի մաս համարվող N 1 հավելվածով ստանձնած պարտավորությունները,** մասնավորապես 20.01.2026թ.՝ ժամը 18:00-ի դրությամբ Կապան տարածաշրջանի 11,1 կմ երկարությամբ ճանապարհահատվածներից ձնամաքրման և սպասարկման աշխատանքներ չի իրականացրել 88,6 կմ թվով 14 ճանապարհահատվածներում

(18.01.2026թ. մինչև 20.01.2026թ.՝ ժամը 14:00-ն, մարզի ողջ տարածքում տեղացած ձյան պատճառով անանցանելի կամ դժվարանցանելի են եղել նաև մարզային (տեղական) նշանակության ճանապարհահատվածները), ինչի արդյունքում 21 բնակավայրերի բնակիչներ զրկված են եղել տարածաշրջանում ազատ ու անվտանգ երթևեկելու իրավունքից, իսկ որոշ դպրոցներում խաթարվել է ուսումնական գործընթացը, Պատվիրատուն Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի հիման վրա միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք նաև, որ **Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ Պայմանագրով, Պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքի համար գանձվում է տուգանք տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում ենք նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ նույն կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «(...): Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումն ստանալուց հետո պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը

միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:»:

Հարգանքով՝ **Է. Մարտիրոսյան**

Կատարող՝ Ա. Բաղդասարյան
Իրավաբանական բաժնի պետ
Հեռ.՝ (0285) 43619